

ՀՏԴ 82.09

Գրականություն

Մանուշ ԲԱԼԱՅԱՆ

ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի հայցորդ

ՌՈՊԵՐ ՀԱՏՏԵՃՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՍՈՒՏՔԸ. «ԲԱՌԱՍԽԱԼ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Ստամբուլահայ ժամանակակից գրող Ռոպեր Հատտեճյանը իր ստեղծագործությամբ Մփյուռքի գրականության մեջ հիմնավորեց հոգեվերլուծական փիլիսոփայական մեթոդը, որի ուսումնասիրության շրջանակն ընդգրկում է մարդու ներաշխարհի և միջավայրի միջև ստեղծված խզման, ինչպես նաև ներդաշնակության հասնելու ձգտման բանաձևի որոնումը: Միաժամանակ նրա ուղենշած գոյութենապաշտական մտածողության սնուցող զարկերակը անսահման հույսն է, ինքնաբացահայտման և ինքնահաստատման հասնելու ճանապարհին դրսևորած հզոր կամքն ու ձգտումը:

Նրա առաջին՝ «Բառասխալ» խորագրյալ պատմվածքների ժողովածուն, որին անդրադարձել ենք հոդվածում, կրում է հեղինակի ստեղծագործությունը անհատականացնող ազդեցիկ շտրիխը՝ մտաերևակայական կերպավորումը, մտածողության կարևորումը:

Բառասխալը՝ չհասկացված լինելը կամ սխալ հասկացվելը, ըստ հեղինակի, հաճախ տեղիք է տալիս մարդկանց միջև հարաբերությունների սրման կամ խզման: Այսինքն՝ կյանքում ամեն երևույթ կամ խոսք ունի դիտարկման և հասկացվածության խիստ ենթակայական մոտեցում: Այս ընդհանրությունից էլ բխում է պատմվածքները միավորող մյուս առանցքը՝ նրանց հոգեբանական բնույթը: Մարդու, նրա հոգեկերտվածքի և հասարակության փոխներգործությունների քննությունը Հատտեճյանի համար զուտ տեսական ուսումնասիրություններից բխող մտացածին մտորումների արդյունք չէ, այլ իրական առնչությունների և վերլուծությունների հիմնավորում:

Բանալի բառեր՝ հոգեվերլուծական մեթոդ, պարադոքսալին հարցադրում, հոգեբանական մտահանգում, հոգեբանական պայմանականություն, կենսական զգայունություն, կերպավորման առանձնահատկություն, ինքնահայեցում, ներանձնացում, նախատիպ, հոգեկերտվածք, ինքնաորոնում, հոգևոր ավանդներ, գոյութենապաշտական գրականություն:

М.Балаян

РОПЕР АТТЕЧЯН И ЕГО СБОРНИК “БАРАСХАЛ”

Современный стамбульский писатель-армянин Ропер Аттечян своим творчеством в диаспоральной литературе обосновал психоаналитический философский метод, рамки исследования которого охватывают поиск формулы разрыва между внутренним миром и средой человека, а также стремление к достижению гармонии. В то же время питающим пульсом его ориентированного экзистенциалистического мышления является безграничная надежда, а также сильная воля и стремление, проявленные на пути самоутверждения.

Его первый сборник рассказов под названием «Барасхал /Ошибка/», к которому мы обратились в данной статье, несет в себе влиятельную черту, олицетворяющую творчество Аттечяна: образную характеристику и важность мышления.

Ошибка - непонимание или неправильное понимание, по мнению автора, часто приводит к обострению или разрыву отношений между людьми. То есть каждое событие или слово в жизни имеет строго подчиненный подход к его наблюдению и пониманию. Из этой общности и вытекает другая ось, объединяющая рассказы - их психологический характер. Для Аттечяна исследование взаимодействий человека, его менталитета и общества является не результатом воображаемых размышлений, возникающих из чисто теоретических исследований, а обоснованием реальных отношений и анализов.

Ключевые слова: психоаналитический метод, парадоксальный вопрос, психологическое умозаключение, психологическая условность, жизненная чувствительность, специфика образа, интроспекция, интроверсия, прототип, менталитет, самопоиск, духовные традиции, экзистенциальная литература.

М. Balayan

ROPER HADDEJYAN'S LITERARY ENTRY: COLLECTION “BARASKHAL”

The modern Istanbul Armenian writer Rober Haddejyan, through his work in the Diaspora literature, justified the psychoanalytic philosophical method, the scope of research of which covers the search for a formula for the gap between the inner world and the human environment, as well as the desire to achieve harmony. At the same time, the feeding pulse of his existentialist-oriented thinking is boundless hope, as well as a strong will and aspiration manifested on the path of self-affirmation and self-affirmation.

His first collection of short stories called "Baraskhal / Mistake", which we have addressed in this article, carries an influential trait that embodies Haddejian's work - that is figurative characterization and the importance of thinking.

Mistake - not-understanding or misunderstanding, according to the author, often leads to aggravation or rupture of relations between people. That is, every event or word in life has a strictly subordinate approach to its observation and understanding. From this generality follows another axis that unites the stories - their psychological character. For Haddejian, the study of interactions between a human, his mentality and society is not the result of imaginary reflections arising from purely theoretical research, but the justification of real relationships and analyses.

Key words: *psychoanalytic method, paradoxical question, psychological inference, psychological convention, life sensitivity, image specificity, introspection, introversion, prototype, mentality, self-search, spiritual traditions, existentialist literature.*

Ռուպեր Հատտեճյանը՝ սփյուռքահայ ժամանակակից նշանավոր գրողն ու հրապարակախոսը, թատերգակը և գրաքննադատը, տարեգիրն ու իմաստասերը, «Մարմարա» հայերեն թերթի բազմափորձ խմբագիրը, ծնվել է 1926-ին, Կ.Պոլսում և իր գիտակցական ողջ կյանքում կարևորել ստեղծագործ աշխատանքը հայ մտքի, լեզվի և գրականության բնագավառում: Այս առումով Ռ. Հատտեճյանի ստեղծագործական կյանքը մի ամբողջ հանրագիտարան է, որ ներկայացնում է Կ.Պոլսի գրական և մշակութային օջախի վերհառնումը, շնչավորումը և ծաղկումը. խոստովանենք, որ 20-րդ դարասկզբի աղետից ու զլխատումից հետո այս գրական օջախի վերընձյուղումը անհրաժեշտ և բնական պայման էր, որը և եղավ մեծ ջանքերի գնով, հաճախ՝ զոհողություններով ու միշտ՝ նվիրումով:

Ռ. Հատտեճյանը շնորհակալ է նախախնամությանը, որ հենց այդ քաղաքն է սահմանել իր համար որպես ծննդավայր ու ապրելավայր, և ողջ կյանքը դարձրել է անխոնջ նվիրում՝ 1967-ից ստանձնելով «Մարմարա» հայերեն օրաթերթի խմբագրապետի պաշտոնը, անշեղորեն կատարելով իր՝ հայ համայնքը համախմբելու, շնորհալի մարդկանց ոգեշնչելու առաքելությունը, շարունակելով Հակոբ Պարոնյանի, Մատթեոս Ջարիֆյանի, Միսաք Մեծարենցի, Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի և Պոլսում ապրած մյուս մեծերի կիսատ թողած գործը:

«Ռ. Հատտեճյանի մեջ դեռ վաղ հասակից ամուր էր «նստած» պատասխանատվության զգացումը ոչ այնքան շրջապատի, հասարակության, ոչ այնքան աւանդական կեցության, որքան իր առջև, իր խղճի դիմաց: Անդուլ աշխատանքը կեանքի ճանաչում է, մարդկանց հետ շփում, հարաբերությունների մեջ գործարար և հոգեւոր սահմանների բարոյական գատորոշում»¹:

¹ Դանիելեան Ս., Ռուպեր Հատտեճյան. ներաշխարհի գեղարուեստական քննություն, 1996, էջ 24:

Մեփական աշխարհայացքի ձևավորման ասպարեզում լեզուների իմացությունը և բնագրով իր նախասիրած գրականությունն ընթերցելը կարևորելով՝ Հատտեճյանը միաժամանակ կարողացավ համատեղել ուսումնառությունը համալսարանում և աշխատանքը հոր առևտրական գրասենյակում: Մակայն ի սկզբանե նա երբեք ստիպողաբար կամ պարտադրանքով ընթերցող չեղավ, նա կարդում էր այն, ինչ հոգեհարազատ էր իրեն, ինչ կարևոր էր համարում «մտքի մարդ» լինելու համար:

«Մտքի մարդը ինձի համար թելերուն տակ գիրք պտըտցնող, բանախօսութիւններու յաճախող մարդը չէր: Մտքի մարդը այն էր, որ կը մտածէր բոլոր երեւոյթներուն դիմաց. մտածումով կ'ապրէր. երեւոյթներուն ետին թաքնուածը տեսնել կը ջանար: Մտքի մարդը այն էր, որ առանձին սենյակի մը մէջ ալ կը շարունակէր մտածել կեանքի երեւոյթներու մասին եւ իր մտածումները կը մշակէր իր ներաշխարհին մէջ, անոնցմէ շէնք մը կառուցանելու հեռապատկերով»¹, - բնորոշել է Ռ. Հատտեճյանը:

Հատտեճյանը միշտ իր համար արդեն ուղենիշ դարձած սարսրյան աշխարհայացքի և մտածողության տեսանկյունից է դիտարկում հասարակական և մարդկային փոխհարաբերությունները: Եվ նրա գրական մեթոդի ակունքը կենսական պահանջներից բխող հրամայականն է. հոգու տառապանքից սկզբնավորվող հույսը: Գոյատևելու կամքը և փրկվելու հավատը ստեղծում են մի տարօրինակ աշխարհ, որտեղ անխուսափելի է դառնում իրականի և երևակայականի բախումը:

Ռ. Հատտեճյանը Սփյուռքի գրականության մեջ ամուր հիմքերի վրա դրեց ժամանակակից եվրոպական գրականության մեջ հիմնավորված գեղարվեստական մի մեթոդ, որի ուսումնասիրության շրջանակն ընդգրկում է մարդու ներաշխարհի և միջավայրի միջև ստեղծված խզման և ներդաշնակության հասնելու ձգտման բանաձևի որոնումը:

Հանգամանքների բերումով իրավամբ «հայ գրականության պարտեզի բազմամյա մշակ» անվանյալ Ռ. Հատտեճյանը ստեղծագործելու առաջին փորձերը կատարել է թուրքերենով, սակայն երջանիկ պատահականությամբ նրա առաջին տպագիր գործը լույս տեսավ հայերենով: «Հայ գրականութիւնը ի՞նչ շահեցաւ, չեմ գիտեր, բայց գիտեմ, թէ ե՛ս շահեցայ հայ գրականութիւնը...»², - խոստովանում է Ռ. Հատտեճյանը:

«Բառասխալ» պատմվածքը հիմք դարձավ, որ նույն խորագրի տակ հետագայում ամփոփվեն տարբեր պարբերականներում հրատարակված 19 պատմվածքները:

¹ **Յակոբեան Մ.**, *Անվերջակէտ գրոյց մեր գրականութեան երախտաւորներուն հետ, Իսթանպուլ, 2013, էջ 57:*

² «Ման», *Իսթանպուլ, թիվ 1-2, Իսթանպուլ, 1968 թ., էջ 39:*

1972-ին լույս տեսած «Բառասխալ» ժողովածուն ընծայագրված է Զարեհ Խրախունուն:

Բառասխալը՝ չհասկացված լինելը կամ սխալ հասկացվելը, հաճախ տեղիք է տալիս մարդկանց միջև հարաբերությունների սրման կամ խզման: Այսինքն՝ կյանքում ամեն երևույթ կամ խոսք ունի դիտարկման և հասկացվածության խիստ ենթակայական մոտեցում: Այս ընդհանրությունից էլ բխում է պատմվածքները միավորող մյուս առանցքը՝ նրանց հոգեբանական բնույթը: Դա Հատտեճյանի արձակը բնորոշող կարևորագույն հատկանիշն է: «...Երբ կարդաք Հատտեճեանին գործերը, չենք կարծեր, որ հանդիպիք նոյնիսկ մեկ էջի, ուր ան հոգեբանական վերլուծումի ենթարկած չըլլա մարդկային այս կամ այն արարքը»¹:

Հատտեճյանի ստեղծագործությունը անհատականացնող մյուս ազդեցիկ շտրիխը նրա մտաերևակայական կերպավորումն է, մտածողության կարևորումը:

«Փիլիսոփայական մտածումէ ախորժող ոեւէ անձ եթէ փոքր ճիգ մը ընէ, պիտի տեսնէ իրերուն ո՛չ թէ ճակատին վրայ եղածը, այլ անոնց ետին մնացածը, այլ խօսքով այն, որ ինքզինք անմիջապէս չի մատներ, այլ կը սպասէ, որ մարդկային մտածողութիւնը քիչ մը ներս թափանցէ հոնկէ, զայն մէջտեղ հանելու համար»², - այսպիսի տեսակետ ունի Ռ. Հատտեճյանը՝ մարդկանց և իրերի փոխհարաբերությունների մասին: Ըստ Հատտեճյանի՝ բոլոր մարդիկ խոցելի են, քանզի մահկանացու են և ստիպված են մահվան ողբերգության զգացողությունը և ապրումները քողարկել հեզմանքի և ժպիտի դիմակի տակ:

«Բառասխալ» ժողովածուի առաջին պատմվածքում, որ վերնագրված է «Գլխու ցավէ դէպի գիտական տեսութիւն», իր առանձնության մեջ տառապող մարդն է, որ միշտ չհասկացված լինելու մտավախություն ունի: Պատմվածքի փիլիսոփայական խորքը սովորական կյանքով ապրող մարդու՝ առօրյա հոգսերից ազատվելու անհնարինությունն է: Իր բոլոր օրերում՝ աշխատանքի թե հանգստի ժամերին, մարդը տառապում ու երկմտում է. իրականում նա գիտակցորեն կրում է իր բաժին հոգսը, ինչպես տանջող գլխացավ, կարող է ազատվել դրանից, սակայն նաև չի կարող, որովհետև այդ հոգս-գլխացավը իրենն է, իրեն ապրեցնողն է, իր կյանքի խորհուրդն է, «գիտական տեսութիւնը»:

Փիլիսոփայական եզրահանգում կարելի է տալ նաև ժողովածուի մյուս՝ «Գրականութիւն» վերնագրով պատմվածքին: Հերոսը մի գիշեր որոշում է զբաղվել ստեղծագործական աշխատանքով՝ «գրականութիւն ընել», ինչպես գրում է Ռ. Հատտեճյանը: Արդյունքում թղթի վրա տարվում են կետեր, գծեր, նկարվում են շրջանակներ, իսկ սեփական երևակայությունը մարդուն հասցնում է նրան, որ այդ ամենը նշանակություն ունի, միայն պետք է հասկանալ: Այս պատմվածքը իր խորքում ներկայացնում է Հատտեճյանի հեղինակի անփոփոխ կարծիքը. գրողը իր

¹ Թորանեան Թ., *Ամբողջական գրագեղութ. Ռոպեր Հատտեճեան, Հալէպ, 2002, էջ 14:*

² Շառոյեան Լ., *Հաւերժօրէն սիրելի մերին Պոլիսը, Իսթանպուլ, 2003, էջ 125:*

ստեղծած գրականությամբ պետք է ընթերցողի հետ խոսել կարողանա, որովհետև նրա համար է գրում: Եվ եթե ումանք «գրականություն ընելը» լուրջ գործ չեն համարում, Ռ. Հատտեճյանը նման մարդկանց համար իր այս և շատ ուրիշ գրվածքներում ունի բազում զավեշտալի լուծումներ:

«Բժիշկը խենդ մը կ'ուզէ» պատմվածքի հանգույցը դարձյալ բառասխալն է: Հատտեճյանը այս պատմվածքում ստեղծել է քսաներկուամյա երիտասարդի կերպար, որն ունի իր աշխարհը, հետաքրքրությունները, հայացքները և նպատակները: Նա ինքը իրեն երջանիկ մարդ է համարում, և այդ երջանկությունը իր մեջ է, իր ներաշխարհում:

Հոգեբանական մեկ այլ կարևոր պահ է հարևան տարեց ամուրիի մոտ նորաթուխ հոր հպարտ ու ինքնավստահ պահվածքը. նա միանգամից ավելի տարիքոտ ու ավելի լուրջ էր դարձել («Հօր մը առաջին օրը»): Կյանքը շարունակվում է, ժամանակի մեջ իրար հաջորդող երկու վայրկյանները մեկը մյուսի շարունակություն են, սակայն տարբեր՝ իրենց բովանդակությամբ: Մի փոքրիկ, դեռևս անանուն գոյություն փոխում է աշխարհը, նոր շունչ ու գույն հաղորդում:

Վերջին երկու պատմվածքները ներկայացնում են մարդու հույզերը, զգացմունքները, երջանիկ լինելու գիտակցությունը. մի դեպքում մարդն իր մեջ, իր հետաքրքրությունների ու երազանքների շրջանակում է գտնում երջանկության բանաձևը, մյուս անգամ՝ իր շրջապատից եկող դրական ազդակներից է ոգևորվում, տոգորվում լավատեսությամբ և պատասխանատվությամբ: Հատտեճյանական բոլոր հերոսներին հատուկ է ներանձնացումը, նույնիսկ ամբոխի մեջ առանձին և յուրօրինակ լինելը: Սակայն հաճախ այդ առանձնությունն այնքան ապրված ու զգայական է ներկայացվում, այնքան համոզիչ և իրական, որ թվում է՝ յուրաքանչյուրի կյանքում այդպես զգալն ու արտահայտվելը պարտադիր պայման է, անխուսափելի ապրում: Նման տրամադրություն է բերում «Ծերունիի մը օրագիրը» պատմվածքը: «Մինչդեռ տարիք մը կայ,- խորհում է ութսունմեկամյա ծերունի հերոսը,- ուրկէ վերջ մարդ կը վերածուի ամայի եւ անպտուղ կղզիի մը»¹:

«Ծերացանք, ըսել է՝ եկանք, հասանք ծերին: Ամեն բանի ծերին, կյանքի ծերին, աշխարհի ծերին...»², - կարծես հենց Հատտեճյանի այս հերոսի մասին են ասված Ավ. Բաահակյանը ծերունի հերոսի՝ Օհան ամու խոսքերը:

Կյանքի և մահվան փիլիսոփայությունը հաճախ է դառնում հատտեճյանական մտածումի քննության առարկան: Այսպիսի մի յուրօրինակ հոգեբանական մտորում է «Ես իմ մահէս առաջ եւ վերջը» պատմվածքը: Մարդու հոգեբանությանը հատուկ է մի հետաքրքիր հանգամանք. ուրիշներին պատահող դժբախտությունը չի կարող կատարվել իր հետ: Հատտեճյանը փիլիսոփայորեն դիտարկում է

¹ *Հատտեճեան Ռ. , Բառասխալ, Բյթանպուլ, 1972 , էջ 159:*

² *Բաահակյան Ավ., Երկեր, Երևան, 1987, էջ 531:*

երևույթի հակառակ կողմը. Իսկ ի՞նչ կլինի մարդու հետ, եթե նա միշտ մտածի մահվան մասին: «Մարդ ամեն օր քիչ մը կը մեռնի»¹, - խորհում է Հատտեճյանը և զարգացնում այն միտքը, որ ամեն օր մահվան մասին խորհող և մահվան փիլիսոփայությունը ըմբռնած մարդը ի վերջո ձանձրանում, հոգնում է մեռնելուց:

Իր խորքում փիլիսոփայական նույնպիսի բազմաշերտ հարցադրում ունի «Երագ» պատմվածքը. արդյո՞ք մարդը կարող է ապրել միաժամանակ երկու աշխարհներում՝ իրական ու երևակայական, և այդ դեպքում կարո՞ղ է ինքը իրեն երջանիկ զգալ: Պետք է նկատել, որ Ռ. Հատտեճյանի պատմվածքներում հաճախ երազները դառնում են հերոսների կողմից վճռական որոշումներ կայացնելու կարևոր ազդակներ:

«Տաղանդաւոր գործի մարդ մը» պատմվածքի հերոսը՝ Հակոբը, որը, երագում իր պարտապանի՝ Մարկոսի մահը տեսնելով, ետ է պահանջում երկուստեք շահավետ գործարքի համար նրան տված գումարը: Հեղինակը ճշտորեն ներկայացնում է Հակոբի տրամաբանությունը. «Իսկական գործի մարդը ան է, որ դրամը տեղ մը տեղավորելէ վերջ գիտէ նաեւ զայն ճիշդ ժամանակին հոնկէ քաշել»²: Եվ զավեշտալին այն է, որ այդուհետ Հակոբը իր «բարեկամի» մահվանն է սպասում (նա համառորեն չէր մեռնում) և ամեն առավոտ սրտնեղությամբ հաշվում դարակում դրված դրամը, որը երբեք չէր ավելանում:

«Ռ. Հատտեճեանի հերոսներից շատերը արդէն մահուան սպասող անհասներ են («Երագ», «Ծերունիի մը օրագիր» և ուրիշներ), ինչը հոգեբանական-փորձարարական ապրումած զգայութեան գեղարուեստական քննութեան կայունացած կառոյց է,- գրել է Ս. Դանիելյանը գրողին և նրա ստեղծագործությունը ներկայացնող մենագրության մեջ:- Պատմուածագիրը իրական կեանքի շարժումը ուսումնասիրում է կեանքի յորձանուտից կտրուած շերտով, ուր շարժումը պայմանական վիճակ է դառնում»³:

Հետաքրքիր ու խորքային լուծում ունի «Երկինքը պարապ է» պատմվածքը: Մարդը նույն երևույթը կարող է դիտարկել տարբեր տեսանկյուններից և տալ միանգամայն հակասական գնահատականներ: Մարդը և միջավայրը փոխկապակցված են իրար և կրում են մեկը մյուսի ազդեցությունը, և իրերի բնությունը բնութագրվում է մարդու տրամադրությամբ: «Մարդիկ երջանիկ են եւ գոհ իրենց աշխարհէն...Անոնք չեն խորհիր երկինքին մասին եւ այնպէս մը կ'ապրին, որ իբրեւ թէ Աստուած գոյութիւն չունի»⁴:

«Աստված գոյություն չունի» նիցշեական հայտնի արտահայտությունը երկար տարիներ չարչրկում է փիլիսոփայական միտքը և, ընդհանուր առմամբ, մեկնաբանվում է որպես մարդկային ընդունված արժեքների մերժում և

¹ **Հատտեճեան Ռ.**, *Բառասխալ, Բյթանպուլ, 1972*, էջ 94:

² Նույն տեղում, էջ 109:

³ **Դանիելեան Ս.**, *Ռուպեր Հատտեճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն», Բյթանպուլ, 1996*, էջ 64:

⁴ **Հատտեճեան Ռ.**, *Բառասխալ, Բյթանպուլ, 1972*, էջ 61:

հավատքի հիմնական համակարգի վտանգում: Հատտեճյանի փիլիսոփայական ընդհանրացումը գոյութենապաշտական տեսակետներից հասնում է նրանց սկզբնավորման եզրահանգումների՝ նիցշեական տեսության ձևակերպումների յուրօրինակ մեկնաբանությանը. այն է՝ եթե Աստծո տեղը պարապ է, ապա վտանգված է հասարակության ողջ բարոյականությունը, նաև մարդու ու մարդկային գոյությունը:

Իրականության նկատմամբ մարդու ներգգայական աշխարհի ընդվզումն է պատկերված «Դավթեանին մնացեալ օրերը» պատմվածքի մեջ:

Քառասունամյա Գնել Դավթյանը մի օր հասկանում է, որ ինքն այլևս չի հասցնում կատարել նախատեսած գործերը: Եվ կյանքի խելահեղ ընթացքի զգացողությունը դառնում է ներքին համոզմունք, վերածվում տառապալից ընդվզումի, անօգուտ պայքարի և հուսալքման. «Այլևս հասկցած է, որ եթե մեռնի, կեանքն էն կշտացած, իր ծրագիրները ամբողջովին իրագործած պիտի չըլլան տակալին...»¹:

Իսկ ինչպե՞ս պետք է զգա ժամանակի ոլորտը՝ որևէ նպատակ չունեցող մարդը: Նրա համար կյանքը պարզապես նկար է, նատյուրմորտ՝ կազմված ծանոթ իրերից, որոնք միշտ նույն դիրքում են, նույն անգործության մեջ անշարժացած: Հենց այսպես է ընկալում կյանքը «Առանց նպատակի» պատմվածքի անանուն հերոսը: Սակայն այս միապաղաղ իրականության մեջ կա ամենակարևորը՝ Մտածումը, որը ուր որ է պետք է ամբողջացնի ցաքուցրիվ պատկերը, խոհի պատառիկները: «Առանց նպատակի» պատմվածքի կարծես տրամաբանական շարունակությունն է «Այսպես լավ է» ստեղծագործությունը: Այս հերոսն էլ նպատակ չունի, բայց երբեք անհանգիստ ու մտահոգ չէր, հակառակը՝ նրա համար ամեն ինչ իր ձևի և բովանդակության մեջ լավ է, և ինքը գործում էր առանց նպատակի՝ հանձնվելով պատահարների, անակնկալ դիպվածների:

«Բառասխալ» ժողովածուում ներառված են պատմվածքներ, որոնցում զավեշտն ու երևակայությունը միախառնված են իրականությանը, և թվում է՝ կյանքը հենց խաղ է՝ մարդկային բազմաթիվ ճակատագրերով ու հարաբերություններով: Խաղի երևակայական ըմբռնումը պայմանականորեն տեղադրվում է կենսական զգայունության հարթակներում:

«Խենդի պատմություն» ստեղծագործության հերոսը փորձում է վերափոխել աշխարհը, կարգավորել մարդկանց կյանքն ու նրանց հարաբերությունները: Մտածում է վերափոխման մի եղանակ, որ ամբողջությամբ հենվում էր մարդկային երևակայության, ինքնաներշնչման ու հավատի վրա: Թվում է՝ ամեն ինչ հրաշալի ստացվում է, սակայն բավական էր, որ սասանվեր մարդու հավատը, և փլուզվում է շենքը, խաղն ընկալվում է որպես ծաղր, դառնում անկառավարելի, և ավելանում է ևս մի խենթ, որը հանդգնել էր խաղատախտակին դնել մարդկային զգացմունքները:

¹Նույն տեղում, էջ 197:

Մյուս ստեղծագործությունը, որտեղ «խաղի կանոնները» գործում են իրականությանը ճիշտ հակառակ պայմաններով «Ես իմ ճակատագրիս հետ զլուխ գլխի» պատմվածքն է:

Մարդիկ հաճախ ձգտում են արտահայտվելու, պատմելու իրենց կարիքների մասին, փորձում են դրանցից ազատվել՝ ուրիշների խորհուրդները լսելով: Սակայն այս խաղն ունի կանոններ, որոնցից կարևորն է անկեղծությունը, ապա՝ վերլուծությունը, մտածողությունը, համոզելը և նման կարևոր պայմաններ, որոնցից ոչ մեկը իրականում չափելի չէ և չի կարող վճարվել: Եվ վերջում անխուսափելի է լուծումը. «Բոլորն ալ գացին առանց օգտակար ըլլալու, և զիս թողուցին իմ ճակատագրիս հետ զլուխ գլխի»¹: Ակնարկը առավել քան թափանցիկ է. մտերիմների խորհուրդները ոչ մի պարագայում վճռորոշ ու վերջնական չեն. մարդն ինքն է իր ճակատագրի տերը:

Հատտեճյանի գրչին բնորոշ է հակադարձ բևեռի միջից ներկայացնել իրականությունը, և եզրահանգումն էլ ստացվում է մարդկային տրամաբանությունից և սպասելիքներից բեկված աներևակայելի և զարմանալիորեն ցանկալի գույներով ու խտացումներով:

Հետաքրքիր հոգեբանական մտահանգում ունի ժողովածուի թերևս ամենազավեշտալի ու ֆանտաստիկ պատմությունը՝ «Համաճարակ» պատմվածքը, որի դիպաշարը որքան անիրական, նույնքան էլ հնարավոր է ու պատճառաբանված: Գրականության մեջ երբևէ ներկայացված ամենաներևակայական պատմությունները հաճախ դարձել են իրականություն: Ու՞ր է տանում կյանքի խելահեղ առաջընթացը՝ համատարած զբաղվածությա՞ն, թե՞ անխուսափելի ծանձրությի: Զանձրությը բերում է հոգնություն, ապա՝ անտարբերություն, որին հետևում է անպատասխանատվությունը: Եվ աղետալին այն է, որ այն վարակիչ է, և վերածվում է համաճարակի: Այս ամենն ունի տրամաբանական մի եզրահանգում. ուրեմն ինչու՞ չի կարող գալ մի ժամանակ, երբ ներկա քաղաքակրթությունը ձախողվի, և մարդիկ ծանձրանան մարդու նման ապրելուց, ցանկանան վերադառնալ նախկին անասնական անքաղաքակիրթ կյանքին՝ հանգիստ ու անհոգ ապրելու համար:

Իր պարադոքսալին հարցադրմամբ ու նույնքան պարադոքսալին ավարտով յուրօրինակ «բառասխալ» է ժողովածուի վերջին՝ «Բախտի մեքենայ մը» խորագրով պատմվածքը:

«Հետազոտության» արդյունքում պարզվում է, որ որոշ մարդկանց մարմնում՝ ինչ-որ տեղ, գոյություն ունի թաքնված մի օրգան՝ «բախտի մեքենա», որը անորսալի է, թափանցիկ: Անորսալի է, քանզի այդպիսի օրգան ունեցողները ապրում են մինչև խոր ծերություն, և այդպիսիներին, բնականաբար, դիտարկելու անհրաժեշտություն չի լինում, և «բախտի մեքենան» իրեն լրիվ սպառած է լինում:

¹ Հատտեճյան Ռ., Բառասխալ, Իսթանպուլ, 1972, էջ 220:

Իսկ երիտասարդ տարիքում մեռնողները այդպիսի մեքենա չեն ունենում. սա է «հետագոտող խմբի» եզրակացությունը:

Մինչ պատմվածքի հերոսը՝ Մուշեղ Մաշայանը, բոլորովին անտեղյակ իրեն հետևող մարդկանց փորձարարական որոշումներին ու եզրակացություններին, վայելում էր հաջողակի և հաղթողի փառքը, խումբը որոշում է՝ «գիտութեան առաջընթացին համար» պետք է գոհել քսանվեցամյա երջանիկ ու բախտավոր մարդուն՝ «ապացուցելու համար իր բացառիկ բախտաւորությունը, իր բախտային գործարանին անուրանալի գոյութիւնը»¹:

Ժողովածուի ընդհանրական-ամբողջական կերպարը ժամանակակից մարդն է՝ ներաշխարհի հոգեկան բարդ շերտերով. մերթ ընդվզումը, մերթ համակերպումը, մերթ աշխարհը վերափոխելու ուղիների տենդագին որոնումները, մերթ ձանձրույթն ու մենության տառապանքը ամենախորքային վերլուծություններով ու տողատակերով միահյուսվում ու ստեղծում են մարդու հոգեկան աշխարհի ապրումներն ու զգայությունները:

«Բառասխալ» ժողովածուն հայ արձակուրդ ուրույն տեղ ապահովեց Հատտեճյան պատմվածագրի համար: Նա իր ստեղծած կերպարների միջոցով փորձեց տեղորոշել կյանքի և մահվան սահմանները, ներկայացնել մարդկային բարդ փոխհարաբերությունները, մտածողության և երևակայության անչափելի ու անճանաչելի լինելը:

Գրականություն

1. Հատտեճեան Ռ., Բառասխալ, Իսթանպուլ, 1972 թ.:
2. Դանիելեան Ս., Ռոպեր Հատտեճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն, Իսթանպուլ, 1996 թ.:
3. Թորանեան Թ., Ամբողջական գրագետը. Ռոպեր Հատտեճեան, Հալէպ, 2002 թ.:
4. Յակոբեան Մ., Անվերջակետ գրոյց մեր գրականութեան երախտաւորներուն հետ, Իսթանպուլ, 2013 թ.:
5. Հատտեճեան Ռ., Գրական գործունեութեան 40-ամեա հանգրուանին, Իսթանպուլ, 1987 թ.:
6. Շառոյեան Լ., Հաւերժօրէն սիրելի մերին Պոլիսը, Իսթանպուլ, 2003 թ.:
7. Իսահակյան Ավ., Երկեր, Երևան, 1987թ.:
8. «Սան», թիվ 1-2, Իսթանպուլ, 1968 թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

¹ **Հատտեճեան Ռ., Բառասխալ, Իսթանպուլ, 1972, էջ 230:**